

Հին դիցազները աշխարհակալներ էին կամ ասպետներ. նորերը, Եարճանեանի հերոսները, յեղափոխականներ են կամ առաքեալներ:

Երեւակայութիւնը Միամանթօի տաղանդին ամէնէն տիրական գիծն է: Ան իրերը եւ դէպքերը բոլորովին նոր եւ ինքնայատուկ ձեւով մը կը դասաւորէ եւ կը գունագեղէ: Կիկլոպ մըն է քերթողը. այն սարսափելի աչքը՝ զոր Աստուած իր լուսեղէն մատով բացած է ըղեղին վրայ. թէ խոշորացոյց մըն է եւ թէ գեղագիտակ մը, որ ամէն բան կը տեսնէ հսկայական համեմատութեամբ: Երեւակայութեան միացած գաղափարականը՝ հռետորութիւնը կը ծնի. երեւակայութեան միացած զգացումը կը ծնի վսեմը: Եարճանեանի արուեստը արդիւնք է այս երկու զուգադրումներուն:– Հեղինակներ կան որ հզօր յուզումէ մը կը բարձրանան տկար երեւակայութեան.– խորունկ բայց տոգոյն են անոնք. ասոնցմէ կը հաշուին Միւսէները, եւ Լէօբարտիները: Հեղինակներ կան որ հզօր երեւակայութենէ մը կը բարձրանան տկար յուզումի մը, հոյակապ բայց արմատապէս սխալ հեղինակներն են. այս վերջիններէն են վիպականներէն մէկ մասը, ի մասնաւորի Վ. Հիւկօն: Եարճանեան ոչ մին է եւ ոչ միւսը. ան հզօր երեւակայութեան մը կատարն է՝ թելաւորուած փոքրիկ յուզումով մը, այդ թելադրիչ յուզումը կարօտախտն է: Օ՛, Միամանթօի *կարօտախտը*: Այդ բառին մէջ է ամբողջ քերթողը. հոն է նաեւ հայ ցեղին ստեղծագործ կարողութիւնը: Հայ բանաստեղծութեան ոգին կարօտախտ է: Մեր երգը երգն է կռունկին, հառաչանք մը՝ դէպ ի թողլքուած հայրենի տունը եւ հեւ ի հեւ թռիչք մը դէպի այն կորսուած կենցաղը՝ զոր կը կոչենք Հայ ժողովուրդին փրկութիւնը:

Երեւակայութիւնը կը կերտէ պատկերներ, որոնցմէ դուրս բանաստեղծութիւն մը բնագանցութիւն պիտի ըլլար: Եարճանեան կարծես հրաշէկ երկաթով մարմարիոնի վրայ պատկերներ կը դրօշէ՝ իր մէն մի տողին, մէն մի բարդ բառին մէջ՝ զոր ստէպ ինքը կը յօրինէ: Այս պատկերաւոր տողերը յաճախ իրարու հետ դասական աղերս